Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
սեպտեմբերի 4 -ի N 540 - Ա
որոշման

«ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ»

Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	«Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցի Արարատյան հայրապետական թեմ» կրոնական կազմակերպության Սուրբ Թադեոս եկեղեցու տարածքում ոռոգման համակարգի կառուցում և շինարարական աշխատանքների իրականացում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Մասիսի 31, ՀՎՀՀ՝ 02269952)
4.	Ծրագիրը կատարողը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Մասիսի 31, ՀՎՀՀ՝ 02269952)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	«Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցի Արարատյան հայրապետական թեմ» կրոնական կազմակերպություն՝ Սուրբ Թադեոս եկեղեցի (ՀՀ, քաղ. Մասիս, 1-ին փողոց, 22/1), բնագավառը՝ հոգևոր:
6.	Ծրագրի բյուջեն	25,000,000 (քսանհինգ միլիոն) դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցի Արարատյան հայրապետական թեմ» կրոնական կազմակերպություն՝ Սուրբ Թադեոս եկեղեցի (ՀՀ, քաղ. Մասիս, 1-ին փողոց, 22/1):

		Ընտրությունը կատարվել է համաձայն բարեգործությունը ստացողի աջակցության խնդրանքի:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2020 թվականի սեպտեմբերի 7-ից մինչև նոյեմբերի 2-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցի Արարատյան հայրապետական թեմ» կրոնական կազմակերպության (Սուրբ Թադեոս եկեղեցու) համար անհրաժեշտ է կազմակերպել եկեղեցու տարածքի ոռոգման համակարգի կառուցում և շինարարական աշխատանքների իրականացում: Աշխատանքների ընդհանուր արժեքը կկազմի 25,000,000 ՀՀ դրամ: Միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2020 թվականի սեպտեմբերի 7-ից մինչև նոյեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Տվյալ ծրագրի շրջանակներում նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում 25,000,000 ՀՀ դրամ գումարի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003թ.-ի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ